ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 1, 1959 Общественные науки

Մ. Մ. Ղազարյան

ԴՐՎԱԳՆԵՐ ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ ԿՅԱՆՔԻՑ

Հայ անվանի նկարիչ Վարդգես Սուրենյանցի մասին կենսագրական տվյալները շատ սուղ են։ Հրատարակված են Վ. Սուրենյանցի «Հուշարարի» համար գրած մի քանի տողից բաղկացած կենսագրականը, ինչպես նաև Յու. Սուրենյանցի (նկարչի քրոջ) համառոտ հիշողությունները նրա մասին[1]*։ Սակայն հենվելով ՍՍՌՄ Դրականության և արվեստի պետական արխիվում, Լենինգրադի մարզի Պետական պատմական և Լենինգրադի Պետական կենտրոնական պատմական արխիվներում, ՀՍՍՌ Պետական Ձեռագրատան և ՀՍՍՌ ԳԱ-ի Դրականության և արվեստի թանգարանում պահպանվող նյութերի, ինչպես նաև մամուլում հանդիպող հիշատակությունների վրա, հնարավոր է դարձել շարադրել անվանի արվեստագետի կյանքի և ստեղծագործության մոտավոր պատկերը, որի մի մասը հրապարակում ենք ստորև։*

* * *

Վարդգես Սուրենյանցը ծնվել է 1860 թ. փետրվարին՝ Ախալցխայում[2]*։ Նա դեռևս 7 տարեկան էր, երբ հայրը նշանակում է ստանում Սիմֆերոպոլ։ Ավագ քահանա Հակոբ Սուրենյանցը ափսոսանքով է թողնում իր երկրորդ ծննդավայր դարձած Ախալցխան*[3]*, նրա ուսումնարանները, որտեղ ինքը ջանք չէր խնայել մատաղ սերնդի դաստիարակման համար։ Ափսոսանքով է թողնում այն քաղաքը, որի ոսկերիչների նուրբ, մանրակրկիտ աշխատանքը, զմայլեցուցիչ ասեղնագործները Փարիզի և Վիեննայի համաշխարհային ցուցահանդեսներում բազմիցս արժանացել էին բարձր գնահատականների։ Որպես քաղաքացի, ուսուցիչ այդ հաջողությունների մեջ իր մասնակցությունն էր ունեցել նաև Հակոբ Սուրենյանցը, որն օգնության էր հասել իր համաքաղաքացիներին, երբեմն զենքով և հերոսական օրինակով, երբեմն խորհրդով և խրախուսիչ խոսքով։*

Սուրենյանցների ընտանիքը բնակություն հաստատելով Սիմֆերոպոլում, հաճախակի լինում էր Թեոդոսիայում, ուր այդ տարիներին սովորում էր Վարդ-

---

[1] *Հայտնի է, որ բանաստեղծ Սիմ. Բարիյանը 1920 թ., Ցալթայում, երբ Վ. Սուրենյանցը գրաված էր տեղի նորակառույց հայկական եկեղեցու նկարազարդմամբ, նկարչի թելադրանքով գրի է առել նրա մանրամասն կենսագրությունը և հիշողությունները, սակայն նրանց տեղը այժմ անհայտ է։*

[2] *Մի շարք տարիներով Վ. Սուրենյանցը ինքը նշում է, որ ծնվել է 1860 թ.։ Լենինգրադի մարզի Պետական պատմական արխիվի Լազարյանների ֆոնդում (№ 880) պահպանվել է Լազարյան ճեմարանի ուսանողների ցուցակը ըստ դասարանների։*

1870 թ. օգոստոսի 24-ին կազմած 1-ին դասարանի ցուցակում կարդում ենք. „№ 22. Вагткес Суреньян. 12 лет. из Симферополя, сын протонерия", հավանաբար «12» թիվը թյուրիմացություն է։

[3] *Սուրենյանցների ընտանիքը 1828 թ. գաղթել էր Կարինից։*

գես Սուրենյանցի ավագ եղբայրը՝ Սուրենը։ Փոքրիկ Վարդգեսը Հովհաննես Այվազովսկու ընտանիքի հետ մասնակցում է դեպի Բախչիսարայ կատարած ճանապարհորդությանը։ Այստեղ նրա վրա մեծ տպավորություն են թողնում գեղանկարչական կիրճում գտնվող Զուրուկ-Սու գետը, Աբդուլ Սախալ Գիրեյ խանի կառուցած ավելի քան 350 տարվա պատմություն ունեցող պալատի ներսի շքեղ սրահները, գեղեցիկ այգիները, մարմարյա շատրվանները և հատկապես նշանավոր Արցունքի շատրվանը, որից փոքրիկ Վարդգեսը հեռանալ չի կարողանում, այնքան ուժեղ է լինում նրա հիացմունքը։ Տանը, նա անմիջապես ամենայն մանրամասնությամբ նկարում է այդ շատրվանը, որն առաջացնում է հանճարեղ ծովանկարչի հիացմունքը։ Հ. Այվազովսկին Վարդգեսի կատարածի մեջ տեսնում է ապագա նկարչի սաղմերը և նկարի փոքրիկ հեղինակն արժանանում է իր մեծ բարեկամի գովասանքին՝ նվեր ստանալով առաջին յուղաներկերը։

1870 թ. Հակոբ Սուրենյանցը Վարդգեսին ուղարկում է Մոսկվա՝ Լազարյան ճեմարանում ուսանելու։ Վ. Սուրենյանցի ուսման առաջին տարիների մասին հետաքրքիր տեղեկություններ է հայտնում Ե. Շահազիզը իր հիշողություններում[4]։ Նա մեծ համակրանքով է խոսում «ծանրաբարո», «անսահման համբերող», «բարի, պարկեշտ և խոնարհ» նոր աշակերտի մասին, որին բնությունը զարդարել էր «ալնպիսի շնորհքով... այդ նրա արտաքո կարգի նկարչական ընդունակություններն էին... բոլոր ժամանակ նստած նկարում էր ընկերներին, ուսուցիչներին և այլ պատկերներ, և այդ բոլորը զարմանալի նրբությամբ և նմանությամբ»։ Հետաքրքրական է մի դեպք, որը, հավանական է, աղմուկ է բարձրացրել ճեմարանում, քանի որ այդ մասին հիշատակում է և Վ. Սուրենյանցի քույրը[5] և Ե. Շահազիզը։ Աչատուր աղա Լազարյանի[6] հերթական այցելություններից մեկի ժամանակ ճեմարան, Վ. Սուրենյանցը կատարում է նրան պատկերող մի դծանկար՝ «տգեղ, հայկական մեծ քթով», այնպիսին, ինչպիսին եղել է նատուրան իրականում։ Ֆրանսերեն ուսուցչի կողմից այդ աստիճան նմանությունը դիտվում է որպես ծաղր, և նրա բարձրացրած աղմուկի հետևանքով նկարի հեղինակն արժանանում է դպրոցական ազատազրկման։

Լազարյան ճեմարանում Վ. Սուրենյանցը մեծ սիրով է ուսումնասիրում հատկապես լեզուները, ընդ որում հայոց լեզուն՝ Սմբատ Շահազիզի, իսկ պարսկերենը՝ Ստ. Նազարյանի մոտ։ Անկասկած, Վ. Սուրենյանցի նկարչական ընդունակությունները խրախուսվում էին Ստ. Նազարյանի կողմից, որը նույնպես նկարչական ձիրք ուներ և դեռևս Ներսիսյան դպրոցում ուսանելու տարիներին ընդօրինակություններ էր կատարել մի շարք գեղանկարչական աշխատանքներից։

1872 թ. հունիսի 13-ին Լազարյան ճեմարանի մանկավարժական խորհուրդը նկատի ունենալով Վարդգես Սուրենյանցի նկարչական ընդունակությունները, որոշում է նրան տալ թոշակ և տեղավորել այն ժամանակ

---

4 «Լեմիաձին», 1949, № 5, էջ 30—33։

5 Վ. Սուրենյանցի ստեղծագործությունների ցուցահանդեսի կատալոգ, 1931, Երևան։

6 Յու. Սուրենյանցը գրում է, որ նկարել է Ն. Դ. Դելյանովին՝ Լազարյան ճեմարանի դիրեկտորին։

ռուսական գեղարվեստական կյանքում խոշոր հեղինակության ներկայացնող Մոսկվայի նկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանը։

Այդ մասին հայտնում է Լազարյան ճեմարանի դիրեկտոր Դելյանովը Ս. Դ. Արամելեկ-Լազարևին։

„Согласно постановлению Педагогического Совета, состоявшемуся 13 июня сего года, духовный воспитанник Лазаревского Института 3-го класса Варткес Суреньянц, ввиду отличных его способностей к рисованию и примерного поведения, назначен к перемещению из института или в художественное общество и училище живописи ваяния и зодчества, или же в Академию наук на счет Лазаревского института, т. е. с выдачею на его воспитание и содержание 300 рублей в год“[7].

Փայլուն կերպով հանձնելով սահմանված ընդունելության քննությունները՝ հավատի քննություն, թվաբանության 4 վարժություններ, ռուսաց լեզու, Վ. Սուրենյանցը ընդունվում է Մոսկվայի նկարչության, քանդակագործության և ճարտարապետության նախապատրաստական՝ օրիգինալ դասարանը, միաժամանակ զբաղվելով ճարտարապետությամբ։ Լազարյան ճեմարանում անցած տարրական նկարչությունից հետո Մոսկվայի նկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանը մի նոր գեղարվեստական աշխարհ էր Սուրենյանցի համար։ Մաթեմատիկական առարկաներից, ֆրանսերեն լեզվից, աշխարհագրությունից հետո նա մեծ ոգևորությամբ է լսում ճարտարապետ Մ. Դ. Բիկովսկու[8] զրույցները արվեստի հուշարձանների մասին, կատարում է պավիլիոնների, փայտե տների, գրադարանների, շքամուտքի աստիճանների զանազան նախագծեր և այդ ամենի հետ գեղանկարչության դասեր է ստանում ռուս նշանավոր նկարիչ Ի. Մ. Պրյանիշնիկովի[9] դասարանում, գծանկարը՝ Ե. Ս. Սորոկինի[10], իսկ շաբաթը մեկ անգամ մասնակցում է Դալի[11] ակվարելային նկարչության դասերին։

Բարեխղճորեն կատարելով առաջին տարվա առաջադրանքները, Վ. Սուրենյանցը փոխադրվում է երկրորդ դասարան։ 1877/78 ուսումնական տարում ճարտարապետական ֆակուլտետի երկրորդ դասարանը բաժանվում է 3 կարգի՝ տարվա ծրագիրն ավելի հիմնավոր անցնելու և յուրացնելու նպատակով։ Վ. Սուրենյանցն ընկնում է երկրորդ կարգը, ուր տարվա ընթացքում կատարում է հունական, հռոմեական և իտալական օրինակելի շենքերի դետալների ընդօրինակումներ, ինչպես նաև ուսումնասիրում է ճարտարապետության տեսություն։ Ե. Ս. Սորոկինի արվեստանոցում գծանկարից ընդօրինակությունը-

---

7 ЦГИА в Ленинграде, ф. 880, оп. 5, ед. хр. 252.

8 Բիկովսկի Միխայիլ Դորմենտովիչ (1801—1865), Մոսկվայի Ճարտարապետական միության հիմնադիրը և առաջին նախագահը։ 1830 թ. ճարտարապետության ակադեմիկոս։ Մոսկվայի նկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանում դասավանդում էր արվեստների պատմություն։

9 Պրյանիշնիկով Իլարիոն Միխայլովիչ (1840—1894), ժանրային նկարիչ։ Պերեգվիժնիկների ընկերության հիմնադիրներից։

10 Սորոկին Եվգրաֆ Սեմյոնովիչ (1821—1892), ռուս նկարիչ։

11 Դալ Լև Վլադիմիրովիչ (1834—1878), ռուս ճարտարապետ և ճարտարապետության պատմաբան։ 1865 թ. ճարտարապետության ակադեմիկոս։

ներ է կատարում հին հունական և հռոմեական քանդակներից։ Այդ տարիներին ուսումնարանի նրա ընկերներն էին, հետագայում անվանի ռուս նկարիչներ Վ. Սիմովը, Ի. Լևիտանը, Ս. Կորովինը, Ն. Կասատկինը և ուրիշներ։ Վ. Սուրենյանցի ուսանողական տարիներից մեզ է հասել միայն 1878 թ. կատարած մի կնոջ դիմանկար, որը, հավանական է, կատարված է լուսանկարից և գեղարվեստական առանձին արժեք չի ներկայացնում։ Բայց ահա, 1879 թ. մայիսի 31-ին մահանում է Վ. Սուրենյանցի առաջին ուսուցիչներից մեկը՝ Ստ. Նազարյանը։ «Մշակ»-ի թղթակիցը, Մոսկվայից գրած իր թղթակցությունում նկարագրելով մեծ հրապարակախոսի թաղման արարողությունը, գրում է.

«Վերջը, տեղիս երեսփոխան Պ. Փանեյանցի հրավիրանոք, որը Նազարյանի մտերիմ բարեկամներից մեկն է և որ այսօր հանձն էր առել տնօրինել թաղման հանդեսը, հանդիսականները դիմեցին դեպի սեղանատուն։ Սա մի դահլիճ է, որի պատերից, բացի հայ թագավորների և կաթողիկոսների պատկերներից, կախ էր արված այդ օրը հանգուցյալ Նազարյանի մեծադիր պատկերը, շրջապատված ծաղկյա պսակով», ապա ծանոթության կարգով, ավելացնում է. «Նազարյանցի այս պատկերը, որպես և նրա գիպսե դիմակը (гипсовая маска), որը շատ կարևոր է ճիշտ արձան ունենալու համար, մեր տաղանդավոր երիտասարդ նկարիչ Վ. Սուրենյանցի աշխատությունն են»[1]։

Դա առաջին հիշատակությունն է Վ. Սուրենյանցի մասին, որ մենք հանդիպում ենք մամուլում, ինչպես նաև հրապարակային առաջին գնահատականը, որը Վ. Սուրենյանցի վրա է հրավիրում արվեստասեր հասարակության ուշադրությունը։

Սակայն այդ օրերին Վ. Սուրենյանցի համար ապագան գտնվում էր ծանր քողի ներքո, որովհետև այդ ապագան տնօրինող հայ բուրժուազիայի համար արժեք չէր ներկայացնում շնորհալի պատանու տաղանդը։

1878 թ. հունվարի 3-ին Ն. Դելյանովը հիշեցնում է Ս. Արամելեկ-Լազարևին, քանի որ վերջինս չէր պատասխանել 1875 թ. հոկտեմբերի 17-ի գրությանը՝ Վ. Սուրենյանցին գեղարվեստական կրթություն տալու և Լազարյան ճեմարանի կողմից թոշակ նշանակելու մասին, որի մասին կայացված որոշման ժամկետը արդեն լրացել էր։

1878 թ. հունվարի 18-ին Ս. Արամելեկ-Լազարևը վերոհիշյալ հիշեցմանը պատասխանում է.

„В 1875 г. духовному воспитаннику Варткесу Суреньянцу определено было выдать 300 руб. в год из сумм Лазаревского ин-та и пользоваться учением в другом заведении по его выбору, о чем и было сообщено мне в октябре месяце того же 1875 года. Неправильность такого постановления Педаг. Совета я не считал себя вправе тогда оспаривать.

Ныне же по поводу Вашего вопроса определить срок помянутой выдачи нахожу с своей стороны не только справедливым, но даже необходимым с нынешнего же 1878 года прекратить ее, как не согласной с уставом института, предоставив Варткесу Суреньянцу пользоваться тою же стипендиею в Лазаревском ин-те, буде этого он по-

[1] «Մշակ», 1879, № 70։

желает. Сообщая Вам о таком моем мнении в настоящем вопросе, я нахожу совершенно правильным если Педагогический Совет снова вошел бы ныне в рассмотрение его и сделал о том постановление, согласное с моим мнением"[13].

Զրկվելով թոշակից, բազմանդամ ընտանիքի նյութական սուղ վիճակը ստիպում է Վ. Սուրենյանցին թողնել Մոսկվայի նկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանը։

Վ. Սուրենյանցի հայրը որոշում է որդուն ուղարկել արտասահման՝ Շտուտգարտի, Ցյուրիխի կամ Մյունխենի պոլիտեխնիկական բարձրագույն հաստատություններում սովորելու, նյութական կողմը կապելով մեծ որդու՝ Սուրենի հետ։

1879 թ. հոկտեմբերի 10-ին, Մոսկվայի գեղարվեստական ընկերության քարտուղարի ստորագրությամբ, Վ. Սուրենյանցին տրվում է մի տեղեկանք, որ նա 1876/7 և 1877/8 թթ. սովորել է Մոսկվայի նկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանում՝ արվեստի գծով գիպսե գլուխների դասարանում, գիտելիքների գծով 3 րդ դասարանում և զբաղվել է ճարտարապետությամբ[14]։

Մոսկվայի ուսումնարանի դեմոկրատական, պրոգրեսիվ մթնոլորտի անջնջելի տպավորությունը հոգում, նկարչական առաջին աշխատանքների խրախուսանքը ճաշակած, Վարդգես Սուրենյանցը 1879 թ. հուլիսին իր ավագ եղբայր Սուրենի ընտանիքի հետ մեկնում է Վիեննա, ապա՝ Մյունխեն։

1879 թ. հուլիսի 29-ին, Վիեննայից իր ավագ ընկերոջը՝ Գրիգոր Խալաթյանին, գրած նամակից պարզվում է[15], որ հասնելով Վիեննա, Սուրենյանցն անմիջապես հետաքրքրվում է տեղի Գեղարվեստների ակադեմիայի ընդունելության պայմաններով, սակայն առայժմ որոշում է հետևել հոր խորհրդին և ընդունվել որևէ պոլիտեխնիկական բարձրագույն հաստատություն։

Վ. Սուրենյանցի կյանքի մյունխենյան շրջանի մասին տեղեկություններն անչափ սուղ են։ Պահպանվել են 3 ալբոմ, 4 ջրանկար աշխատանքներ, վերջերս հայանաբերված մի բնորդի դիմանկար, զանազան ոճի ճարտարապետական սյուների գծագրումներ, մի քանի ընդօրինակումներ և Մյունխենից Գ. Խալաթյանի գրած նամակի սևագրությունը։ Պարզվում է, որ Վ. Սուրենյանցը սկզբում սովորել է Մյունխենի բարձրագույն պոլիտեխնիկական դպրոցի ճարտարապետական ֆակուլտետում։ Ուսման երկրորդ տարում՝ 1881թ.[16], Վ. Սուրենյանցը թողնում է բարձրագույն պոլիտեխնիկական դպրոցը և ընդունվում է Գեղարվեստի ակադեմիան, ուր սովորում է Օտտո Զեյցի[17] արվեստանոցում։

---

[13] ЦГИА в Ленинграде, ф. 880, оп. 5, ед. хр. 252.

[14] ՍՍՌՄ Գրականության և արվեստի պետական արխիվ, ֆոնդ 660, օպ. 1, № 318։

[15] ՀՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարան, Գ. Խալաթյանի ֆոնդ, 5-րդ բաժին, № 756։

[16] Հենվելով Գ. Խալաթյանի նամակի, ինչպես նաև Վ. Սուրենյանցի կենսագրության համար խոշոր նշանակություն ունեցող այլ փաստերի վրա, պետք է ենթադրել, որ իր գրած ինքնակենսագրականում Վ. Սուրենյանցը թույլ է տվել մի փոքր սխալ՝ գրելով 1882 թ.։ Այն հանգամանքը, որ ինքը ևս հիշողությամբ և կասկածելով է գրել այդ թվականը, դրա ապացույցն է այն, որ բնագրում 1882-ի 2 թվանշանը գրված է նախօրոք եղած 0-ի վրա։ Այդ հաստատվում է նաև նրանով, որ Գ. Խալաթյանը նկարագրում է իր նամակներից մեկում այդ հանգամանքը։ Նա Մյունխենում էր 1881 թ. հունվար—մայիս ամիսներին։

[17] Օտտո Զեյց (1843), գերմանացի նկարիչ-ժանրիստ։

Վ. Սուրենյանցի քույրը Յու. Սուրենյանցը, նկարչի ստեղծագործությունների 1931 թ. ցուցահանդեսի կատալոգում հիշատակում է, որ Վ. Սուրենյանցը սովորել է Կաուլբախի մոտ, որը կարող էր լինել Ֆրից (Ֆրեդերիկ) Ավգուստ ֆոն Կաուլբախը, որը իրոք այդ տարիներին դասավանդում էր Մյունխենի Դեղարվեստների ակադեմիայում, սակայն վերջերս հայտնաբերված մի ուշագրավ փաստաթուղթ առավել լուսաբանում է այդ հարցը։ Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան պետական հանրային գրադարանի ձեռագրային բաժնի Ն. Պ. Սորկոյի ֆոնդում պահպանվել է մի բացիկ-նամակ Վ. Սուրենյանցի ձեռագիր տեքստով, ուր նա, հավանաբար պատասխանելով Ն. Պ. Սորկոյի հարցերին, գրում է[18].

„Род. в 1860 г. в Ахалцихе (Тифл. губ.). Первоначальное образование получил в „Лазаревском институте восточных языков" в Москве, откуда в 1876 г. на средства того же института был определен в Московское училище живописи, ваяния и зодчества. В 1879 г. отправился за границу и изучал то архитектуру, то живопись в Германии и Италии. В 1882 г. перешел окончательно по живописи и до 1885 г. работал у Оттона Зейтца в Мюнхенской Королевской Академии художеств. В 1886 г. предпринимал ряд путешествий с художественной целью по Персии и Закавказью и с 1892 г. поселился в Москве"[19].

Օտտո Զեյցը իր ուսանողների մեջ սեր էր առաջացնում դեպի կենցաղային նկարչությունը, բնության ուսումնասիրությունը, միաժամանակ ստիպում էր, որ նրանք ուսումնասիրեն և ընդօրինակումներ կատարեն գեղարվեստի անցյալի վարպետների ստեղծագործություններից, որոնցով այնքան հարուստ էր Մյունխենի հին Պինակոտեկան։ Վ. Սուրենյանցի այդ տարիների ալբոմներում պահպանվել են թերթիկներ, որոնք պատկերում են Ռեմբրանդտի «Ծերունի հոլանդացու դիմանկարը», Ռուբենսի «Բնած Դիանան» նկարից կենտրոնական դետալը (ցածում գրված „Rubens P. Venus"), «Ահեղ դատաստանից», Բրոուերի[20], Ուդեի[21] ստեղծագործություններից դանազան ֆիգուրներ, Ֆորտունիի[22] նկարից, Բենժամեն Կոնստանից[23] և անգլիական „London news" լրագրից մի շարք արևելյան տիպեր, ինչպես նաև առանձին փոքր կտավների վրա ընդօրինակումներ Վան-Դեյկից և Մարիլիոյից։ Ընդօրինակումները կատարված են յուղաներկով, դրչով և մատիտով։ Ուշագրավ է հեգինակի ուշադրությունը պատկերվող անձնավորության բնորոշ դիմագծերի և հատկապես տարազների վերարտադրման հարցում։

Իր նյութական վիճակն ապահովելու համար—Հակոբ Սուրենյանցի բազմանդամ ընտանիքը նյութապես այնքան էլ լավ վիճակի մեջ չէր—Վ. Սուրենյանցը ստիպված է լինում հայոց և ռուսաց լեզվի մասնավոր դասեր տալ։

[18] Ն. Պ. Սորկոն պատրաստել էր հրատարակության „Словарь русских художников" աշխատանքը, որը լրիվ չի հրատարակվել։

[19] Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան հանրային գրադարանի ձեռագրային բաժին, Ն. Պ. Սորկոյի ֆոնդ, № 611, բացիկի վրա փոստի կնիքն է, 1896 թ. 15/5։

[20] Բրոուեր Ադրիա (1606—1638), ֆլամանդացի խոշոր նկարիչ։

[21] Ուդե Ֆրից, Ֆոն (1848—1911), գերմանացի նկարիչ։

[22] Ֆորտունի Մարյանո (1838—1874), իսպանացի նշանավոր նկարիչ և փորագրող։

[23] Կոնստան Բենժամեն Ժան Ժոզեֆ (1845—1902), ֆրանսիացի նկարիչ-ժանկավարժ։

Այդ նույն ժամանակ Վ. Սուրենյանցը կատարում է մի խոշոր կոմպոզիցիոն աշխատանք հայկական կյանքից, որի անունն անգամ մեզ չի հասել, սակայն հայտնի է, որ ուսանողական ցուցահանդեսից այն գնվել է 800 մարկով։ Դա մի խոշոր բարոյական օգնություն էր, որը ստեղծագործական թևեր է տալիս պատանի արվեստագետին։

Ճարտարապետության ֆակուլտետը թողնելու և ապագայում նկարիչ դառնալու միտքը անակնկալ հարված է լինում Հակոբ Սուրենյանցի համար։ Բուրժուական սահմանափակ հասկացողությունը նկարչի անապահով վիճակի մասին ստիպում է նրան բազմիցս դրել որդուն ետ կանգնելու այդ քայլից, սակայն Վարդգես Սուրենյանցի համար կյանքում այլևս այլ նպատակ չկար։ «Ես նկարիչ եմ և չեմ ուզում ընկնել երկու բանի ետևից։ Ես դիլետանտ չկամիմ լինել նկարչության մեջ։ Վերջապես դեպի ճարտարապետությունը չունեմ այն համակրությունը, այն ձգտումը, որ կարողանամ ինձ համար (ստեղծված) դժվարությունները հաղթելով ավարտելս,—հայտարարում է նա Դ. Խալաթյանին, երբ վերջինս, ճանապարհորդելով Եվրոպա, Մյունխենում, առաջին իսկ օրը լինում է Վարդգես Սուրենյանցի մոտ և Հակոբ Սուրենյանցի հանձնարարությամբ համոզում է նրան թողնել նկարչությունը։ Իր զրույցների արդյունքների մասին Դ. Խալաթյանը գրում է իր եղբորը՝ Մոսկվա։

Այդ նամակից պարզվում է, որ առաջին նկարի անսպասելի հաջողություններից հետո Վարդգես Սուրենյանցը, «զգևորված զանազան փայլուն գաղափարներով ապագայի մասին», նախաձեռնում է երկրորդ աշխատանքը արևելյան կյանքից, մտադիր լինելով նրա վաճառքից առաջացած գումարով ճանապարհորդել Կովկաս, հատկապես Հայաստան և ավելի մոտիկից ծանոթանալ հայ ժողովրդի կյանքին։ Այդ զրույցների ժամանակ Դ. Խալաթյանն ինքն է համոզվում, որ Վարդգեսի ընտրած ուղին ճիշտ է, որովհետև նա «հմուտ է արևելյան ոճին—արևելյան կյանքը, արևելքի զգեստները, կարասիքը, նիստ ու կացը, արևելյան տիպերը, կոլորիտը—ինչպես երևում է ուսումնասիրել է նա և ահա մի ասպարեզ, մի շրջան, որ շատ սակավ ծանոթ է այստեղի նկարիչներին և որը իր ձեռքում մի տեսակ գաղտնիք է։ Ըստ իս՝ ցանկանալու է միայն, որ նա իր նկարչության մեջ առաջանա, անուն հաստատի»[24]։ Դ. Խալաթյանի այն հարցին, որ ավարտելով գեղարվեստի ակադեմիան, նա հնարավորություն չի ունենա Ռուսաստանում որևէ տեղ աշխատանքի ընդունվելու, Վ. Սուրենյանցը համոզում է, որ եթե ինքը ցանկանա որևէ աստիճան ստանալ, ապա կարող է իր դիպլոմային աշխատանքը ներկայացնել Պետերբուրգի Գեղարվեստների ակադեմիային, որը նրան առաջին կամ երկրորդ կարգի նկարչի կոչում կշնորհի, իսկ դա իր հետ կբերի նաև պաշտոնական իրավունքներ։ Եվ այդ կարգի լավատեսական հեռանկարներով էր տարված մի երիտասարդ, որն այդ օրերին նստած էր առանց կոպեկի, 250 մարկից ավելի պարտքով, ակադեմիայի լսարանները հաճախելու վարձը ամիսներով չվճարած, սակայն հաստատ կանգնած իր ընտրած ուղու վրա։ Արհամարհելով ամեն տեսակի դժվարություններ, նա ցերեկները լինում է ակադեմիայում, իսկ օրվա երկրորդ կեսը նվիրում է ձեռնարկած նոր նկարի ավարտմանը։ Վերջացնելով աշխատանքը, նա այդ ստեղծագործությունը ևս մեծ հաջողությամբ վաճառում է,

---

24 ՀՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստների թանգարան, Դ. Խալաթյանի ֆոնդ, 3-րդ բաժին, № 20։

-ից ստացած գումարը հնարավորություն է ստեղծում հետևել Օտտո Զեյցի խորհուրդներին և ճանապարհորդել Իտալիա։ Ճանապարհորդությունը տևում է ավելի քան 8 ամիս՝ 1881 թ. փետրվարից մինչև հոկտեմբեր։ Այդ ճանապարհորդության ժամանակ Վ. Սուրենյանցը լինում է Միլանում, Ֆլորենցիայում, Հռոմում։ Մոտ 2 ամիս ապրում է Վենետիկի Ս. Ղազարի կղզում, որտեղ նրան հիմնականում հրապուրում են Մխիթարյանների հարուստ գրադարանը և մասնավորապես՝ այնտեղ պահպանվող հայկական միջնադարյան ձեռագրերը[25]։ Այդ ձեռագրերի մանրանկարներից Վ. Սուրենյանցի կատարած ընդօրինակումները մեզ չեն հասել, սակայն հայտնի է, որ մի շարք աշխատանքների թվում, նա ընդօրինակել է նաև 902 թ. Մլքե թագուհու ձեռագիր ավետարանից «Փրկիչը գահի վրա» և «Տիրամայրը սուրբ առաքյալների հետ», 1288 թ. ձեռագիր ճաշոցից «Լեռնային քարոզ», «Մեղավոր կինը», «Լևոն 2-րդ թագավորի դատը» թերթիկները, բազմաթիվ գլխագրեր և սկզբնաղարդեր, որոնց նա խնամքով պահպանել է և մի շարք այլ աշխատանքների հետ միասին ցուցադրել է 1898 թ. պատմական նկարիչների ընկերության 3-րդ ցուցահանդեսում։ Իտալիա կատարած ճանապարհորդությունից Վ. Սուրենյանցն իր հետ բերում է բազմաթիվ ջրաներկ էտյուդներ, որոնցից մի քանիսը պահպանվել են, ինչպես օր. «Հռոմի մի անկյուն», «Վենետիկ, Գոլեոնի հուշարձանը», «Վենետիկի մեծ ջրանցքը» և զանազան այլ տեսարաններ, որոնցում առաջին հերթին աչքի է ընկնում Սուրենյանց-Ճարտարապետի ձգտումը, ուսումնասիրել հեռանկարի հետ կապված զանազան հարցեր, իսկ մյուս կողմից Սուրենյանց-նկարչի հետաքրքրությունը տվյալ հուշարձանի կամ կոթողի ճշմարտացի վերարտադրումը, որոնցում նա իրեն դրսևորում է նաև որպես ջրաներկի տեխնիկային տիրապետող նկարիչ։

Ճանապարհորդությունից բերած էտյուդները, Վ. Սուրենյանցը ցուցադրում է ուսանողական հերթական ցուցահանդեսում, արժանանալով մասնագետների բարձր գնահատականին։ Այնքան մեծ է լինում նրա ուսուցիչներից մեկի[26] հիացմունքը իր ուսանողի առաջադիմության և հաջողության առթիվ, որ խրախուսական մի նամակ է գրում Մոսկվա Սուրենյանցի ընտանիքին, շնորհավորելով նրանց Վ. Սուրենյանցի ճիշտ ընտրած ուղու համար։ Այդ հաջողությունները շատ քիչ են նպաստում Վ. Սուրենյանցի նյութական վիճակի բարելավմանը։ Ընկերների խորհրդով և դասատուների միջնորդությամբ նա սկսում է գծանկարներ և ծաղրանկարներ կատարել Մյունխենում հրատարակվող նշանավոր „Fliegen de Blätter" («Թռուցիկ լրագիր») հումորիստական թերթի համար։ Հնարավորություն չենք ունեցել այդ աշխատանքները տեսնելու[27], սակայն անկասկած է, որ նրանք նպաստել են Սուրենյանցին

---

[25] Սուրենյանցի դրադարանի գրքերից պահպանվել է նաև Ղ. Ալիշանի «Շիրակ» աշխատությունը, հրատարակված 1881 թ., որի վրա հեղինակը գրել է՝ «Առ ազնիվ պարոն Վարդգես Սուրենյանց հեղինակից»։

[26] Յու. Սուրենցյանցը 1931 թ. կատալոգի առաջաբանում հիշատակում է, որ Կաուլբախն է գրել այդ նամակը։ Հնարավոր է նաև այդ հանդամանքը, քանի որ այդ ժամանակ Մյունխենի Գեղարվեստի ակադեմիայի նշանավոր դասախոսներից էր Ֆրից (Ֆրեդերիկ Ավգուստ ֆոն Կաուլբախը (1850-՞), պատմական նկարիչ Ֆրեդերիկ Կաուլբախի որդին։ Սակայն հնարավոր է նաև, որ այդ նամակը ուղարկել է Օտտո Զեյցը։

[27] Մոսկվայի Վ. Ի. Լենինի անվան հանրային գրադարանում պահպանվել են այդ թերթի մինչև 1879 թ. համարները, իսկ Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան հանրային գրադարանում հնարավոր է եղել թերթել 1883—1884 թթ. համարները։

կյանքի այս կամ այն երևույթները ավելի խոր և ուշադիր ուսումնասիրելուն։ Մյունխենում կատարած Վ. Սուրենյանցի գունանկարչական աշխատանքներից մեզ հասել էր մի «Ծերունի բնորդի դիմանկար»[28], որն աջից վերևում ունի նկարչի հայերեն ստորագրությունը և կատարման 1883 թվականը։ Դիմանկարը հետաքրքիր է իր ձևերի պնդությամբ և հատկապես կերպարի ներքին դրամատիզմով, որն հանգստության արտաքին քողի տակ հանդես գալով, բնորոշ է Վ. Սուրենյանցի հետագա բոլոր ստեղծագործություններին։ Նկարի ընդհանուր կոլորիտը ակադեմիզմի գորշ շագանակագույնն է, սակայն այդ շագանակագույնի հետ առկայծող արծաթավուն տոները իրենց մեջ կրում են Վ. Սուրենյանցի արվեստի հանգիստ, արծաթագույն կոլորիտի նախադրյալները։

Վ. Սուրենյանցի Մյունխենյան շրջանի մասին հայտնի է նաև, որ նա մտերիմ է եղել բաքվեցի երիտասարդ Մութաֆյանի հետ, որի դիմանկարը (գծանկար), կատարված Մյունխենում, 1883 թ. պահպանվում է Հայաստանի Պետական պատկերասրահում[29]։ Վ. Սուրենյանցի հետ, այդ տարիներին, Մյունխենի Գեղարվեստի ակադեմիայում սովորել է նաև ապագա հունգարացի նշանավոր նկարիչ Ս. Հոլոշին[30], իսկ 1883—1885 թթ. դեպի արտասահման կատարած ճանապարհորդության ժամանակ Մյունխենում է լինում և բարեկամանում է Վ. Սուրենյանցի հետ ռուս նկարիչ Ա. Դ. Կիվշենկոն[31] և իրրև հիշատակ այդ լավագույն օրերի նրան է նվիրում մի բնանկար (ՀՊՊ), վրան մակագրած՝

„В. Я. Суреньянцу на память о мюнхенской жизни от А. Кившенко. 7 янв. 1885“.

Հաջողությամբ ավարտելով Մյունխենի Գեղարվեստների ակադեմիան, 1885 թ. փետրվարին Վարդգես Սուրենյանցը վերադառնում է Մոսկվա։ Այդ օրերին, կայսերական հնագիտական ընկերության արևելյան բաժանմունքի հանձնարարությամբ մի էքսպեդիցիա է ուղևորվում դեպի Պարսկաստան։ Էքսպեդիցիան ղեկավարում է նշանավոր ռուս իրանագետ, Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Վ. Ա. Ժուկովսկին[32], որը մտադիր էր ուսումնասիրել հատկապես Թեհրանի, Սպահանի, Շիրազի և Մազանդարանի շրջանների պարսկական գրականության նմուշները, ֆոլկլորը և ազգագրությունը։ 1885 թ. մայիսին Վ. Սուրենյանցը էքսպեդիցիայի հետ որպես նկարիչ մեկնում է Պարսկաստան։ Այդ ճանապարհորդության ժամանակ նա առաջին անգամ լի-

---

[28] Վերջերս է միայն հայտնաբերվել և գնվել է Հայաստանի Պետական պատկերասրահի կողմից։

[29] Մինչև այժմ հայտնի էր որպես «Անհայտ մարդու դիմանկար»։

[30] Հոլոշի Սիմոն (1857—1918), ծագումով հայ։ Ավարտելով կրթությունը Մյունխենում, հիմնադրում է մասնավոր արվեստանոց, ուր հավաքվում էին տարբեր ազգությունների մասնագետներ։ Իր ճանապարհորդության ժամանակ այնտեղ է եղել նաև հայ անվանի նկարիչ Հ. Շամշինյանը, որի դիմանկարը կատարել է Հոլոշին (Հայաստանի Պետական պատկերասրահ)։

[31] Կիվշենկո Ալեքսեյ Դանիլովիչ (1851—1895), ռուս ռեալիստ նկարիչ։ Հատկապես նշանավոր է նրա „Совет в Филях“ նկարը (1880), որի համար ստացավ արքայական իր այդ գործունեությունը։

[32] Ժուկովսկի Վալենտին Ալեքսեևիչ (1858—1918), ռուս նշանավոր իրանագետ։ Նրա աշխատությունները խոշոր ներդրում են ռուսական իրանագիտության կողմից համաշխարհային գիտության մեջ։

նում է իր երգած Հայաստանում, տեսնում է նրա ավերակ ու կանգուն հուշարձանները, հիանում այն բնաշխարհով, որը կախարդական հեքիաթի նման դարձել էր պատանի արվեստագետի երազանքը։ Նա տեսնում է Արարատը, Արաքսը, համարյա ավերակ դարձած հին Ջուղան, անցնում է Թավրիզ, լինում է Զանջանում, Թեհրանում։ 1885 թ. հուլիսին էքսպեդիցիան հասնում է Սպահան, ուր Վ. Սուրենյանցը կատարում է էտյուդներ, հատկապես կանգ առնելով պատմական ճարտարապետական կոթողների վրա։ Այդ էտյուդների թվում են եղել «Իման Զադե սրբի դերեզմանը», «Սուլթան Հուսեյն Շահի մեջլիսի ներքին տեսքը Սպահանում» և այլ աշխատանքներ, որոնց հիմնական մասը մեզ չի հասել։ 1885 թ. անցկացնելով Սպահանում, 1886 թ. գարնանը էքսպեդիցիան ուղևորվում է դեպի հարավ՝ Շիրազ, ապա Մազանդարանի ոստանի Սարի կենտրոնը և ահա մեկ տարուց ավելի տևող այդ ճանապարհորդության ընթացքում, պրոֆ. Վ. Ա. Ժուկովսկին բավականին նյութ է հավաքում, որոնք հետագայում ի մի են բերվում և հրատարակվում, նրա կինը՝ Վարվառա Ալեքսանդրովնան բազմաթիվ նյութեր է հավաքում արևելքի կանանց կենցաղի վերաբերյալ (հետագայում այդ նյութերը Վ. Սուրենյանցը կօգտագործի Ա. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» նկարազարդելիս), իսկ Վ. Սուրենյանցն իր հետ բերում է մի քանի տասնյակ էտյուդներ։ Այդ աշխատանքները նա ցուցադրում է միայն 1892 թ. Մոսկվայում՝ «Արվեստները սիրող ընկերության» էտյուդների 4-րդ ցուցահանդեսում, ինչպես նաև մեկ այլ նկար՝ «Կաթնավաճառի կրպակը Թեհրանում» (նկարի տեղն անհայտ է)՝ նույն ընկերության 1893 թ. հերթական ցուցահանդեսում։ Քննադատներից մեկը[33] իր դրախոսականում տվյալ ընկերության ցուցահանդեսում Վ. Սուրենյանցի նման յուրօրինակ նկարչի հանդես գալը համարում է ուրախալի երևույթ, հիանում է նրա կարողություններով՝ արևելքը հասկանալու և արևելյան յուրահատուկ օրնամենտը այդ աստիճան վարպետորեն պատկերելու համար։

Վ. Սուրենյանցը, բացի իր հետ բերած էտյուդներից, Պարսկաստանից վերադառնալուց հետո նրանց հիման վրա կատարում է նոր աշխատանքներ։ Անկասկած այն, ինչը կատարված էր անմիջապես տեղում, դեղարվեստական խոշոր արժեք է ներկայացնում։ Մեզ հասած այդ կարգի ստեղծագործությունների թիվը շատ սակավ է. «Պարսկական տան ճակատ Ջուղայում», «Էտյուդ խաչքարով», «Դուռ ստալակտիտով», «Ղոհրուդ գյուղի տեսարան», «Ընտած պարսիկներ», «Երիտասարդ պարսիկի դիմանկար»։ Դրանք հետագայում խոշոր կտավներ ստեղծելու նպատակով կատարած էտյուդներ են, որոնցում Սուրենյանցը յուրօրինակ ձևով է մոտեցել արևելյան բնաշխարհի պատկերմանը։ Վերցնելով կիզիչ արև, կեսօր, արևից շիկացած քարեր, կավե տուն ամալի, չոր բակով, բոլոր դեպքերում էլ նկարիչը կարողանում է ընկալել այդ երկրին բնորոշը, հիանալ բնության ամեն մի կտորով և արտահայտել բնության ներքին տրամադրությունը։ Այդ էտյուդներում զգացվում է նաև Սուրենյանցի համակրանքը դեպի պարսկական արվեստում մեծ տեղ գրավող դեղեցիկ զարդարանքները, վիտրաժները, դորգերը, որոնք հետագայում կենդանություն կստանան պարսկական թեմաներով կատարված նրա մի շարք աշխատանքներում։

---

[33] „Артист", 1892 г., № 25, С. Глаголь, Четвертая выставка этюдов общества любителей художеств.

Վ. Սուրենյանցի ստեղծագործական ժառանգության մեջ խոշոր տեղ են գրավում արևելյան թեմաներով կատարված աշխատանքները։ Այդ կարգի մեզ հասած ստեղծագործությունների թիվը հասնում է մոտ մեկ տասնյակի[34]։

Պարսկական թեմաներով կատարած ստեղծագործությունների շարքում յուրահատուկ տեղ է գրավում «Սերենադա» նկարը (1888 թ. Հայաստանի Պետական պատկերասրահ), որն ամենայն հավանականությամբ կատարված է պարսկական երգիչների ստեղծագործությունների անմիջական ազդեցության տակ[35]։

Ընտրած վայրը, հավանական է, Շիրազի նշանավոր Աֆեֆ-Աբադ այգու մի անկյունն է՝ արևելյան ոճի դեղեցիկ ցանկապատով, դեպի վեր խոյացող, լուսնի լույսով ողողված նազելի մշտադալար նոճիներով։ Լճակի մոտ, ցանկապատին հենված, իր հրաբորբոք սիրո երգն է երգում երիտասարդ պարսկուհին... հարավային տաք, ուշ երեկո է... նկարիչը ամեն ինչ պահում է մեկ ընդհանուր տոնի մեջ. ցանկապատը, լճակը. լուսնի սառը շողերը շոյում են նոճիների գագաթները, ֆիգուրաների դեմքերը։ Առաջին իսկ ստեղծագործության մեջ արդեն առկա է Վ. Սուրենյանցի արվեստին հատուկ բնորոշ մի գիծ՝ հասնել իրերի նյութականության, իրերի ֆակտուրայի այնպիսի արտահայտչականության, որն իր գունային նուրբ անցումներով, տոնային լուծմամբ նպաստի նկարի ընդհանուր տրամադրության արտահայտմանը։ Նկարի մեջ ջերմություն, կյանքի հանդեպ ունեցած հիացմունք կա։ Այնտեղ կյանքը պատկերված է գեղեցիկ, պոետիկ շնչով։

1892 թ. ցուցահանդեսում պարսկական էտյուդների և նկարների հաջողություններից ոգևորված Վ. Սուրենյանցը սկսում է աշխատել «Պատանի Հաֆիզը երիտասարդ շիրազուհիներին գովերգում է Մուսլի վարդերը» նկարի վրա, մի թեմա, որը նրա մոտ հավանաբար առաջացել էր դեռևս Պարսկաստանում, երբ 1886 թ. Սուրենյանցն այցելեց Հաֆիզի դամբարանը Շիրազում։ Արվեստը սիրող Մոսկովյան ընկերության 12-րդ ցուցահանդեսում՝ 1892—1893 թթ. ցուցադրված Վ. Սուրենյանցի «Հաֆիզի երգը» անկասկած եղել է նույն թեմայով հետագայում կատարած աշխատանքի առաջին վարիանտը, և նա չի ունեցել այն ներդործությունը, ինչպիսին ունեցավ երկրորդը, որով և պետք է բացատրել ցուցահանդեսի այցելուների ուշադրությունից նրա դուրս մնալը։ Այն. որ Շարժողական գեղարվեստական ցուցահանդեսների ընկերության 24-րդ ցուցահանդեսում՝ 1896 թ. ցուցադրված է եղել այդ նկարի երկրորդ վարիանտը, վկայում է այդ նույն ցուցահանդեսի կատալոգում տպագրված «Պատանի Հաֆիզը» աշխատանքի լուսանկարը, որի ցածում պարզորոշ ընթերցվում է՝ „В. Суреньянцъ 95“։ Տեսած չլինելով աշխատանքը՝ հնարավորություն չունենք այն բազմակողմանիորեն վերլուծել[36], սակայն հեն-

---

[34] Մեծ մասը մեզ չի հասել։

[35] Ժամանակակիցների՝ Ա. Կարինյանի, Ա. Հովհաննիսյանի, Մ. Գևորգյանի, բանավոր վկայությամբ արևելյան երգիչների ստեղծագործությունները եղել են Վ. Սուրենյանցի ուրուստ գրադարանի գարդը։ Արվեստանոցում, ընկերների համար, նա հաճախ է ընթերցել Հաֆիզի գազելները, Օմար Խայամի ռուբայաթները, ինչպես նաև Ֆիրդուսու «Շահնամեից»։ Հայերենի, ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի, իսպաներենի, իտալերենի հետ միասին Վ. Սուրենյանցը քաջ տիրապետում էր նաև պարսկերեն լեզվին։

[36] Բանավոր տեղեկություններ կան, որ այդ նկարը գնել է Խարկովի բանկատեր Տերեշչենկոն։

վելով վերոհիշյալ լուսանկարի վրա, կարող ենք որոշ գաղափար կազմել նրա մասին։ Պարզ է, որ Սուրենյանցին Հաֆիզի կերպարը հրապուրել է որպես ժողովրդի հետ կապված աշուղ, որպես սիրո, գեղեցկության և երիտասարդության երգիչ։ Այդ նկարի մասին պահպանվել են մի շարք հետաքրքիր կարծիքներ, հատկապես Վ. Ա. Սերովի և Ի. Ե. Ռեպինի վեճն այդ նկարի մասին։ Վ. Սերովը, բարձր գնահատելով Հաֆիզի և նրան ուղեկցող աղջկա ֆիգուրաների կատարումները, մնացած բոլոր հարցերում այն հավասարեցնում է „заурядная вещь"-ի աստիճանին[37], իսկ Ի. Ե. Ռեպինին հուզում էր այն նորը, որը ցուցահանդես էր բերել երիտասարդ արվեստագետը։ Շեշտելով գծանկարում եղած թերությունները, նա միաժամանակ բարձր է գնահատում նկարի ընդհանուր տրամադրությունը, աղջիկների դեմքերի ռեալ, բնորոշ պատկերումը։ Հուզիչ միայն թեման և նրա մեկնաբանումը չէր։ Ռեպինին հիացնում էր նաև գեղանկարչական նոր մոտեցումը։ „Оригинальность до странности, сдержанность до сухости, страстная любовь до едва уловимой тонкости деталей", որը նրան դարձնում է „яркий тип возникающей новой школы"[38]։

Նկարն արժանանում է նաև Վ. Վ. Ստասովի ուշադրությանը։ Իր հերթական հոդվածներից մեկում, նշելով արևմտաեվրոպական նկարիչների կողմից այդ թեմային անդրադառնալը, Վ. Վ. Ստասովը «Հաֆիզի երգը» համարում է այդ աշխատանքներից մի քայլ առաջ, շեշտելով և բարձր գնահատելով նկարչի արևելյան ճարտարապետության լավատեղյակ լինելը և նկարի ընդհանուր գունագեղությունը[39]։

Տարիներ շարունակ Վ. Սուրենյանցին հուզում է նաև Ֆիրդուսու կերպարը։

Վ. Սուրենյանցի կողմից դեպի Ֆիրդուսին և նրա ստեղծագործությունն ունեցած հետաքրքրության արտահայտությունն էր 1902 թ. Շարժական գեղարվեստական ցուցահանդեսների ընկերության 30-րդ ցուցահանդեսում ցուցադրված «Սպիտակ ամրոց» նկարը, որը կատարված է տրիպտիխի ձևով (նկարի տեղն անհայտ է)[40]։

Տասը տարի անց, 1913 թ., Շարժական գեղարվեստական ցուցահանդեսների 42-րդ ցուցահանդեսում Վ. Սուրենյանցը ցուցադրում է «Ֆիրդուսին կարդում է իր «Շահ-Նամեն» Մահմեդ Ղազնեացուն» պատկերը (Հայաստանի

---

[37] „И. Е. Репин", т. 2, стр. 167. „Воспоминания А. В. Жиркевича".

[38] И. Е. Репин, Нужна ли школа искусств в Тифлисе?, „Кавказ", 1897 г № 7—8. Ինքը Վ. Սուրենյանցը բարձր էր գնահատում Ի. Ռեպինի կարծիքն իր մասին։ Այդ մասին է վկայում վերջերս հայտնաբերված Վ. Սուրենյանցի մի ինքնագիր նամակը, ուր նա հենվում է Ի. Ռեպինի կարծիքի վրա (ՀՊՊ, ֆոնդ 38)։

[39] В. В. Стасов, Заметки о 24-й выставке передвижников, „Новости и Биржевая газета", 1896, № 60.

[40] Լուսանկարը տեղավորված է՝ 1. „Каталог 30-й выставки Товарищества передвижных художественных выставок", 1902 г. 2. «Բաներ գրականության և արվեստի», Ա. գիրք, 1903։

Վերջերս հայտնաբերված է մի գունավոր ռեպրոդուկցիա, որտեղ պատկերված է պարսկական կյանքից վերցված մի անորոշ տեսարան։ Աջի ցածում պարզ ընթերցվում է В. Суреньянц, թերևս դա Վ. Սուրենյանցի «Էջ Շեհերազադեից» աշխատանքն է, որը կատարվել է 1895 թ.։

գետական պատկերասրահ[41]), որով թվում է, թե նկարիչն ամփոփում է իր մտորումները արևելյան երգիչների կերպարների պատկերավորման հարցում[42]։

...Ֆիրդուսին կարդում է իր «Շահ-Նամենն»։ Շուրջն ամեն ինչ քարացած է և գահին նստած շահը, և նրա ոտքերի մոտ բազմած հովազը, և գահի մոտ կանգնած մանկլավիկները, և երկու կողմում շարված պալատականները։ Պալատականների խորամանկ, իսկ երբեմն ոչինչ չասող, բութ հայացքները, սառը, ապոտված հայացքով շահը, նրա ուժի սիմվոլ՝ հովազը, արտահայտում են այն կյանքը, որը արևելյան բազմերանգ դույներով շարադրված է Ֆիրդուսու ձեռքին բռնած թերթիկներում։ Պատկերի կոմպոզիցիայի ստեղծման ժամանակ Վ. Սուրենյանցը առաջնորդվում է միզանսցենների և բեմական դեկորների կառուցման սկզբունքով, որը ավելի է շեշտում մոմենտի պայմանականությունը։

Աշխատանքը ուշագրավ է հատկապես կատարումով։ Դա արդեն 90-ական թվականների Վարդգես Սուրենյանցի հանգիստ, նկարի բոլոր դետալները ամենայն մանրամասնությամբ մշակած գունանկարչական մոտեցումը չէ, որը, ինչպես երևում է, դուր չէր գալիս հենց իրեն՝ նկարչին։ Այդ մասին վկայում է իր հոդվածում նաև Խ. Վերմիշևը.

„Слишком у меня выходит отделанно, чисто и гладко во всех частях,—возражал он на мои похвалы,—это недостаток, потому что картина должна выражать жизнь так, как она представляется нашему взору. Очевидно, раз вы рассматриваете лицо человека, вы не можете видеть всех подробностей его костюма, заплатки на его сапогах или шва на его брюках. Эти второстепенные предметы, не находящиеся в поле вашего фиксированного зрения, видны вам в самых общих чертах. И в таком виде и надо изображать их на полотне. Центральное, главное должно быть точно, отчетливо, тщательно, все остальное в общих чертах“[43].

Վարդգես Սուրենյանցի հետագայում կատարած աշխատանքներում այլևս չենք հանդիպում ճարտարապետական զարդանկարների մոզաիկայի, գորգերի, վիտրաժների այնպիսի կատարյալ մշակման, որպիսին առկա է «Ոտնակոխ արված սրբություն», «Ալհամբրա», «Շամիրամն Արա Գեղեցիկի գլուխի մոտ», «Թափորի ելքը Էջմիածնի եկեղեցուց» և այլ աշխատանքներում, որոնց դիտելուց հետո հիացմունքի հետ մնում է նաև անբացատրելի զարմանք նկարչի կարողությունների հանդեպ։

Կյանքի վերջին տասնամյակներում կատարված ստեղծագործություններին («Զաբել թագուհու վերադարձը գահին», «Սալոմե», «Կիննո-սպանտ», «Ա. Իգնատոնի դիմանկարը» և այլն) հատուկ են գունանկարչական նոր ձևեր, նոր

---

[41] Նկարը մինչև այժմ հայտնի էր «Ֆիրդուսին կարդում է իր «Շահ-Նամենն» Մահմեդ 2-րդի համար» անվան տակ, սակայն հայտնի է, որ սուլթան Մահմեդ 2-րդը թուրքական սուլթան է և ապրել է 1785—1839 թթ., իսկ Ֆիրդուսու ժամանակ ապրած Մահմեդը՝ Ղազնևացին է (963—1039)։

[42] 1902 թ., „Новое обозрение“ թերթի № 6102 Խ. Վերմիշևի «Նամակ Պետերբուրգից» թղթակցությունից պարզվում է, որ Վ. Սուրենյանցը, դեռևս մինչև 1902 թ. կատարել է մեկ ուրիշ աշխատանք նվիրված Ֆիրդուսուն, որտեղ Ֆիրդուսին „перед шахским двором, в вдохновенной позе, поощряемый благоволящей, ласковой улыбкой своего учителя Дзльи, декламирует „Шах-Наме“. Նկարի տեղն անհայտ է։

[43] Նույն տեղում։

հնարներ։ Թվում է նկարիչը որոնումների մեջ է։ Նախկին հարթ, հանդիստ քսված ֆոներին, կիսատոնների լուծված ֆորմաներին փոխարինում են գունային գծերի հետաքրքիր համադրություններ, որոնք պահպանվում են մեկ տոնի մեջ, լրիվ օգտագործվում է կտավի բաց շագանակագույն ֆոնը, մի մեթոդ, որը հատկապես հատուկ է Վ. Սուրենյանցի գրաֆիկական աշխատանքներին։ Զարդանկարների, զգեստների նախշերի պատկերումները ստանում են լուրօրինակ հնչեղություն, նրանց մանրակրկիտ մշակումը այլևս չի հրապուրում նկարչին։ Առաջնահերթ խնդիր է դառնում դունանկարչական ընդհանրացնող մեթոդը։

«Ֆիրդուսին կարդում է իր «Շահ-Նամեն» Մահմեդ Ղազնևացուն» աշխատանքի մեջ գծային համադրություններով ստացված միջավայրի և տարազների մյջից թվում է, թե հեղինակը գիտողին է մատուցում զուսպ, արտահայտչականությամբ հագեցած դեմքերը։ Ռեալիստ նկարչի համար գեղանկարչական նոր պրոբլեմները ևս միայն մեկ նպատակ ունեն՝ մարդկային հույզերի, ապրումների վերհանումը, այսինքն՝ այն գերիշխող հոգեբանական ներքին գիծը, որը դրված է Վ. Սուրենյանցի բոլոր ստեղծագործությունների հիմքում։

Պարսկաստան կատարած ճանապարհորդությունից հետո, 1889 թ. սեպտեմբերին, Վ. Սուրենյանցը հրավիրվում է Էջմիածին, Գևորգյան ճեմարանը, որպես նկարչության ուսուցիչ։ Այդ հրավերն իրականացվում է բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանի օժանդակությամբ, որն այդ ժամանակ ճեմարանում դասավանդում էր ռուսաց լեզու և ընդհանուր մատենագրության պատմություն[44]։ Այդ ժամանակաշրջանից պահպանվել են հետաքրքիր փաստաթղթեր, որոնցից մեկը գտնվում է Հայաստանի Պետական Ձեռագրատանը և ունի հետևյալ բովանդակությունը.

«Առ վանական կառավարության
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի։

Նորին վեհափառության Տ. Տ. Մակար սրբազնագույն կաթողիկոսի Ամենայն Հայոց հրավիրյալ ի Մոսկվայի որպես ուսուցիչ նկարչության աշակերտաց ճեմարանի պ. Վարդգես Սուրենյան, բարեհաճյալ է նշանակել նմին տարեթոշակ ռուբլի 66 ի վանական կառավարությունդ բարեհաճ եղեք հատուցանել ի հաշիվ հունվար ամսո 1890 ամի, վաթսուն և վեց ռուբլի (66 ռ 65 կ.) և վաթսուն և վեց կոպեկս վասն հանձնելու պ. Վարդգես Սուրենյան։

Տեսուչ ճեմարանի Ն. Ա. Ն.
վարչության ճեմարանի Ռ. Ռուբինյան»[45]։

---

44 Հավանական է, որոշ դեր է խաղացել նաև նկարիչ Եղիշե Թադևոսյանը, որը այդ ժամանակ արդեն սովորում էր Մոսկվայի նկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանում և ապրում էր Վ. Սուրենյանենց տանը։

Լենինգրադի մարդի Պետական պատմական արխիվի «Պետերբուրգի հայկական եկեղեցիների գույքերի պահպանման կառավարչության խորհրդի» ֆոնդում պահպանվում են Վ. Սուրենյանցի մորը՝ Իսկուհի Սուրենյացին թոշակ նշանակելու գրագրությունները, ուր կա 1889 թ. դեկտեմբերի 13-ին Էջմիածնից Պետերբուրգ ուղղված հեռագիրը՝ հետևյալ բովանդակությամբ. „Повелением верховного патриарха . Вардгес Суренянц вызван в Эчмиадзин. Распорядитесь выслать немедленно Московскому духовному правлению 150 руб. путевых для выдачи Суренянцу. Член синода епископос Нерсес. Ներսես Խուդավերդյան Եղիշե Թադևոսյանի բևռին էր, որն անկասկած որպես արվեստասեր մի անձնավորություն, խոշոր դեր է խաղացել այդ հարցում։

45 ՀՍՍՌ Պետական Ձեռագրատուն, Գևորգյան ճեմարանի արխիվ, թղթ. 38, վավ. 1։

1890 թ. Վ. Սուրենյանցը հասնում է Էջմիածին և ստանձնում ցածր դասարանների նկարչության դասերը, իսկ բարձր դասարաններում՝ «Քրիստոնեական արվեստի պատմության» դասախոսությունները[46]։ Վ. Սուրենյանցին ճեմարանում ուսուցչություն ստանձնելը անհրաժեշտ էր, նախ՝ նյութական ապահովության համար, իսկ մյուս կողմից նրան հրապուրում էին արվեստի պատմության վերաբերյալ դասախոսությունները, որոնք հնարավորություն էին ստեղծում այդ բնագավառում ունեցած հարուստ դիտելիքները մատաղ սերնդին հաղորդել և նրանց մեջ սեր առաջացնել գեղի արվեստը։

Էջմիածնում Վ. Սուրենյանցը մեծ ողևորությամբ ձեռնամուխ է լինում նաև վանքի հարուստ դրադարանում պահպանվող ձեռագրերի ուսումնասիրմանը, ընդօրինակություններ է կատարում ձեռագրերի մանրանկարներից, որոնցից 989 թ. Էջմիածնի և 1236 թ. ավետարաններից, ինչպես նաև 1647 թ. ճաշոցի առանձին մանրանկարների ընդօրինակումները նա ցուցադրում է 1898 թ. Մոսկվայում բացված պատմական նկարիչների ընկերության 3-րդ ցուցահանդեսում[47]։

Վ. Սուրենյանցը ընդունում է նաև Մակար կաթողիկոսի առաջարկը մայր տաճարի ներսի վերանորոգումները կատարելու, որի համար նա ընդօրինակում է տաճարի ներսի որմնանկարները, թվով 130 էջ, որոնց տեղը հնարավոր չեղավ պարզել[48]։

Վ. Սուրենյանցին հանձնարարվում է նաև վանքի խցերի և ապագա վանահարանի համար նախագծի պատրաստումը, ուսկայն Էջմիածին է գալիս ճարտարապետ Ֆ. Շտերնը, և այդ նախագիծը կաթողիկոսը հանձնում է նրան,

---

46 Ա, Բ, Գ բարձր լսարաններում՝ շաբաթական 2 ժամ դասախոսություն։

Գ, Դ, Ե, Զ ցածր լսարաններում՝ 2-ական ժամ նկարչություն։ Ընդամենը 6 ժամ (ՀՍՍՌ Պետական Ձեռագրատուն, Գևորգյան ճեմարանի արխիվ, թղթ. 38, վավ. 1).

ՍՍՌ ԳԱ-ի Գրականության և արվեստի թանգարանի Վ. Սուրենյանցի ֆոնդում պահպանվել են այդ առարկայի ծրագրի 2 սևագիր օրինակները, իսկ Հայաստանի Պետական Ձեռագրատանը՝ 1 օրինակ։

47 Վ. Սուրենյանցի Էջմիածնում անցկացրած տարիների մասին հետաքրքրական է նաև հետևյալ փաստը. Հովհաննես Հովհաննիսյանը Վաղարշապատից 1890 թ. ապրիլի 29-ին գրում է Մկրտիչ Բարխուդարյանին.

«Մեծն Իտալիո թագաժառանգը եկավ. վեհափառը մի շաբաթ նրա այնտեղ գալուց առաջ Վարդգեսին ուղարկեց Սևան Սուքիաս եպիսկոպոսի հետ պատրաստություն տեսնելու Սևանում՝ նրա ընդունելության համար և հրավիրելու Էջմիածին»։

Այդ մասին կարդում ենք նաև «Արարատի» 1899 թ. մայիսի 31-ի համարում, որից պարզվում է, որ նրանք եղել են Ելենովկայում, ուսումնասիրել են կղզին, ճարտարապետությունը, որոնց մասին իտալերեն լեզվով մանրամասն տեղեկություններ է տվել Վ. Սուրենյանցը։

48 Ուշադրավ տողեր կան այդ մասին Գարեգին Ա. կաթողիկոսի Անթիլիասում հրատարակված «Նիութեր և ուսումնասիրութիւններ հայ արուեստի և մշակոյթի պատմութեան» գրքի պրակ Ե-ում։

«Գիտենք նաև, որ հանգուցյալ նկարիչ Վարդգես Սուրենեանը գունազարդ նկարած ուներ ծաղկաղարդերի մոտիվները, որոնցից օգտվելով պիտի ծաղկաղարդեր Ղուկասեանների շինած Եալթայի եկեղեցին Հռիփսիմեանց տաճարի ոճով շինուած.

[Այդ աշխատանքները Վ. Սուրենյանցը սկսել է դեռևս 1906 թ.։ Այժմ պահպանվել է գմբեթի տակի որմնանկարի մի փոքրիկ հատվածը։ Վ. Սուրենյանցի դերեզմանը գտնվում է նույն եկեղեցու աջակողմում։ — Մ. Ղ.] Դրանց նախարտուկները պահպանվում էին Հոգարարձութեան մոտ։ Մեր առաջնորդական այցելութեան ժամանակ իբրև Նոր-Նախիջևանի և Ռուսաստանի առաջնորդ փորձեցինք ստանալ և Երևանի թանգարանն ուղարկել ի պահ, բայց չհաջողեցաւ»։

որն օտարին հատուկ անտարբերությամբ, իր ներկայացված նախագծով հիմնական վերափոխման է ենթարկում հայ ժողովրդի ճարտարապետության լավագույն հուշարձաններից մեկը։ Վ. Սուրենյանցի հետագա հոդվածներից պարզ է դառնում, թե որքան մեծ վիշտ է պատճառել այդ հանգամանքը նրան[49]։

Վ. Սուրենյանցը, գալով Էջմիածին, մեծ խոստումներ է ստանում հոգևոր իշխանությունից, ինչպես ինքն է այդ մասին մի փոքր հումորով գրում իր ընկերներից մեկին։

«Երկու անգամ գնացի Վեհափառին տեսության՝ մի անգամ տեսչի հետ՝ իբրև ճեմարանի ապագա ուսուցիչ և հետո Ներսես եպիսկոպոսի հետ՝ իբրև վանքի ապագա պաշտոնյա արվեստից հատակագծանաց և այլոց... մի զարմանալ, Մուրադյանը այստեղ ուսուցիչ էր ամենայն լեզվույն ֆրանսիականացնց»[50]։

Մակար կաթողիկոսի մահից հետո սրվում են տարաձայնությունները հոգևորականների և դասատուների միջև, որի հետևանքով մի խումբ ուսուցիչներ ադատվում են պաշտոնավարելուց, որոնց թվում նաև Վարդգես Սուրենյանցը[51]։

Վարդգես Սուրենյանցի առաջավոր հայացքների համար Էջմիածնի միաբանության շրջանակն անհամատեղելի էր, և ահա, 1891 թ. հունիսին, փակելով իր հաշիվները ճեմարանի ղեկավարության հետ, նա մեկնում է Մոսկվա։

---

49 Էջմիածնի տաճարի վերանորոգման կապակցությամբ, իսկ դա սկսվել է դեռևս Մակար կաթողիկոսի օրոք և ավարտվեց միայն 1956 թ., երբ հիմնական վերանորոգման ենթարկվեց եկեղեցու և մյուս կառուցումների ներսի մասերը, Վ. Սուրենյանցը գրել է մի քանի հոդվածներ և դեկուցագրեր, որոնց մի մասը ժամանակին հրատարակվել է մամուլում.

50 ԳԱ-ի Գրականության և արվեստի թանգարան, Վ. Սուրենյանցի ֆոնդ, Վ. Սուրենյանցի նամակը Մկրտիչ Բարխուդարյանին, 1890, 5 փետրվարի։

51 ՀՍՍՌ Պետական Ձեռագրատուն, Գևորգյան ճեմարանի ֆոնդ, թղթ. 36, վավ. 1.։ Այդ առթիվ 1891 թ. իր բողոքն է հայտնում նաև «Մուրճ»-ը։ Այդ մասին կարդում ենք նաև Կարապետ Կոստանյանի օրագրում։ ՀՍՍՌ ԳԱ-ի Գրականության և արվեստի թանգարան, Կ. Կոստանյանի ֆոնդ, գործ 422։